ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՍՏՈՒԳԱՉԱՓԱՅԻՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ, ՉԱՓԱՆՄՈՒՇՆԵՐԻ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՏՈՒՐՔԵՐԻՑ ՈՒ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով 1992 թվականի մարտի 13-ի՝ "Ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին" Համաձայնագրի վրա,

հաշվի առնելով Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներում ստեղծված չափագիտական հիմքը եւ չափման միջոցներ ու ստանդարտ նմուշներ արտադրող, ստուգաչափում եւ չափագիտական վկայագրում իրականացնող ձեռնարկությունների մասնագիտացումը,

գիտակցելով չափումների միասնականության ապահովման համաձայնեցված մեթոդաբանության եւ չափանմուշների, ստանդարտ նմուշների, հաստատված տեսակի չափման միջոցների եւ գործող նորմատիվ փաստաթղթերի մասին գիտատեխնիկական տեղեկատվության պատրաստման եւ փոխանակման տեխնոլոգիայի պահպանման, ինչպես նաեւ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության (ՄՕԶՄ) եւ Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) շրջանակներում համապատասխան միջազգային պարտավորությունների կատարման անհրաժեշտությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի օբյեկտ են հանդիսանում ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման համակարգում կիրառվող նորմատիվ փաստաթղթերը, չափանմուշները, չափման միջոցները եւ ստանդարտ նմուշները, այսուհետ՝ ապրանքներ:

ՀՈԴՎԱԾ 2

Ստուգաչափային եւ չափագիտական վկայագրման նպատակով փոխադրվող ապրանքները ազատվում են մաքսային տուրքերի, հարկերի վճարումից եւ հատուկ թույլտվություն ստանալուց:

ՀՈԴՎԱԾ 3

Փոխադրման ենթակա ապրանքների ցանկը (անվանացանկը) սահմանում են ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման ազգային մարմինները:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը եւ տարաձայնությունները շահագրգիռ Կողմերի միջեւ լուծվում են խորհրդակցությունների (բանակցությունների) միջոցով:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակները եւ սկզբունքները լիովին ընդունող այլ պետությունների կողմից միանալու համար՝ ավանդապահին՝ Բելառուսի Հանրապետության կառավարությանը, միանալու վերաբերյալ փաստաթղթերը հանձնելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրը կնքվում է անսահմանափակ ժամկետով:
Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի դուրս գալ սույն Համաձայնագրից՝ իր որոշման մասին ոչ ուշ, քան դուրս գալուց 12 ամիս առաջ գրավոր ծանուցելով ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում պետությունների կողմից Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին երրորդ ծանուցումը ավանդապահին հանձնելու օրվանից:

Կատարված է Ալմաթի քաղաքում 1995 թվականի փետրվարի 10-ին՝ մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի հոկտեմբերի 31-ից: